

«Ֆինանսների նախարարություն»

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 34/2

23 դեկտեմբերի 2014 թ.

Քննարկվեց քաղաքացի Սերգեյ Բաղդասարյանի գանգատը «ՖՆ Էրեբունու» ՀՏ պետի 24.10.2014 թ-ի թիվ 1461 որոշման դեմ:

Քաղաքացի Սերգեյ Բաղդասարյանի գանգատում բերված փաստարկները.

Ըստ գանգատի, Սերգեյ Բաղդասարյանը (այսուհետ նաև գանգատաբեր) որպես անհատ ձեռնարկատեր 2008 թ-ի հունիսի 10-ից գրանցվել է ՊԵԿ Էրեբունու ՀՏ-ում և իրականացրել է շինանյութի առուվաճառքի գործունեություն: 03.05.2012 թ-ի դրությամբ պետական բյուջեի հանդեպ ունեցել է 692.310 դրամի հարկային պարտավորություններ, որից 416.575 դրամը սոցիալական վճարի գումար, իսկ 275.735 դրամը եկամտահարկի գումար: Այդ կապակցությամբ 03.09.2012 թ-ին Էրեբունու ՀՏ կողմից հայցադիմում է ներկայացվել «Վարչական դատարան գանգատաբերից 692.310 դրամ գումար բռնագանձելու պահանջով»: «Վարչական դատարանի 22.05.2013 թ-ի վճռով հայցը բավարարվել է:

05.10.2012 թ-ին տրված թիվ ՎԴ/6125/05/12 կատարողական թերթի համաձայն 13.11.2012 թ-ին ԴԱՀԿ ծառայության ՊԵԿ-ի հայցերով բռնագանձումների բաժնի հարկադիր կատարողի կողմից հարուցվել է թիվ 01/11-03650/12 կատարողական վարույթը, հայցագնի չափով արգելանք է դրվել գանգատաբերին պատկանող գույքի և դրամական միջոցների վրա: 04.12.2012 թ-ի անդորրագրով գանգատաբերը ԴԱՀԿ ծառայության հարկադիր կատարողին վճարել է 100.000 դրամ, իսկ 22.04.2013 թ-ի անդորրագրով՝ 641.464 դրամ, դրանով իսկ ամբողջությամբ մարելով պետական բյուջեի նկատմամբ հարկային պարտավորությունները:

Սույն թվականի հոկտեմբերի 27-ին ստացվել է «ՖՆ Էրեբունու» ՀՏ պետի 24.10.2014 թ-ի թիվ 1461 որոշումը, համաձայն որի 23.10.2014 թ-ի դրությամբ գանգատաբերի հարկային պարտավորությունները կազմում են 355.296 դրամ, որից եկամտահարկի գծով 216.065 դրամ /ապառք՝ 42.676 դրամ, տույժ՝ 173.389 դրամ/, պարտադիր սոցիալական ապահովության վճարի գծով 139.232 դրամ տույժ:

Սերգեյ Բաղդասարյանը որպես անհատ ձեռնարկատեր իր գործունեությունը դադարեցրել է 25.04.2012 թ-ին, հետևաբար՝ դրանից հետո հարկային պարտավորություններ առաջանալ չէին կարող, իսկ 03.05.2012 թ-ի դրությամբ պետական բյուջեի հանդեպ ունեցած 692.310 դրամի հարկային պարտավորություններն ամբողջությամբ կատարվել են, ինչը հաստատված է նաև 05.08.2013 թ-ի թվով 5 վճարման հանձնարարականներով, համաձայն որոնց ի կատարումն թիվ ՎԴ/6125/05/12 կատարողական թերթի ԴԱՀԿ ծառայության միջոցով Էրեբունու ՀՏ հաշվին է փոխանցվել 706.156 դրամ:

Վերը նշվածի հիման վրա գանգատաբերը գտնում է, որ «ՖՆ Էրեբունու» ՀՏ պետի 24.10.2014 թ-ի թիվ 1461 որոշմամբ արձանագրված խախտումներն ակնհայտ կերպով անհիմն են, չեն համապատասխանում «Վարչական օրենսդրության պահանջներին» և խախտում են իր իրավունքները և օրինական շահերը:

Ելնելով վերոգրյալից՝ Սերգեյ Բաղդասարյանը խնդրում է վերացնել «ՖՆ Էրեբունու» ՀՏ պետի 24.10.2014 թ-ի թիվ 1461 որոշումը:

« Հինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

« ՀՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ « ՀՆ էրեբունու ՀՏ պետը, քննարկելով Սերգեյ Բաղդասարյանի /Նախկին անհատ ձեռնարկատեր/ վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 23.10.2014 թ-ի դրությամբ Սերգեյ Բաղդասարյանի չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 355.296 դրամ, որից եկամտահարկի գծով՝ 215.065 դրամ, պարտադիր սոցիալական ապահովության վճարի գծով տույժ՝ 139.232 դրամ: Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին մասին» ՀՀ օրենքի 55, 56, 58, 88 հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ էրեբունու ՀՏ պետի կողմից 24.10.2014 թ-ին ընդունվել է թիվ 1461 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Սերգեյ Բաղդասարյանից 355.296 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

Քննարկման ընթացքում պարզվեց հետևյալը.

28.09.2012 թ-ին էրեբունու ՀՏ-ի կողմից ՀՀ վարչական դատարան է ներկայացվել Ա/Ձ Սերգեյ Բաղդասարյանից հոգուտ պետական բյուջեի 692.310 դրամ բռնագանձելու պահանջի մասին հայցադիմում: Ա/Ձ Սերգեյ Բաղդասարյանի պետական բյուջեի հանդեպ պարտավորությունների հանրագումարն առ 03.05.2012 թ-ի դրությամբ կազմել է 692.310 դրամ, որից 416.575 դրամը սոցիալական վճարի գծով, 275.735 դրամը եկամտահարկի գծով:

Պարտադիր սոցիալական ապահովության վճարի մասով պարտավորությունն առաջացել է 2011 թ-ի հոկտեմբերից դեկտեմբեր, 2012 թ-ի հունվարից մարտ ամիսների ամսական նվազագույն և 2011 թ-ի պարտադիր սոցիալական վճարի տարեկան եկամուտների մասին հայտարարագրով (1542 դրամ), ինչպես նաև 2011 թ-ի 4-րդ եռամսյակի, 2012 թ-ի 1-ին եռամսյակի հաշվետվություններով հաշվարկված գումարները սահմանված ժամկետում չվճարելու հետևանքով:

Եկամտահարկի գծով պարտավորության հանրագումարը 03.05.2012 թ-ի դրությամբ կազմել է 275.735 դրամ (որից ապառք 273.411 դրամ, տույժ 2324 դրամ), որն առաջացել է 2011 թ-ի տարեկան եկամուտների մասին պարզեցված հաշվարկով (236.280 դրամ) և 2012 թ-ի 1-ին եռամսյակի հաշվարկներով ներկայացված գումարները սահմանված ժամկետում չվճարելու հետևանքով:

« ՀՀ վարչական դատարանի 22.05.2013 թ-ի վճռով էրեբունու ՀՏ ներկայացված հայցն ամբողջությամբ բավարարվել է: 27.06.2013 թ-ին տրված կատարողական թերթը 17.07.2013 թ-ին ներկայացվել է ԴԱՀԿ ծառայություն՝ կատարման: ԴԱՀԿ ծառայության 12.03.2013 թ-ի որոշմամբ կատարողական վարույթը կարճվել է՝ կատարողական թերթի պահանջը փաստացի կատարված լինելու հիմքով:

Այնուհետև, ՀՀ ՖՆ էրեբունու ՀՏ պետի կողմից 24.10.2014 թ-ին ընդունվել է թիվ 1461 որոշումը, որի համաձայն 23.10.2014 թ-ի դրությամբ Սերգեյ Բաղդասարյանի չկատարված հարկային պարտավորությունները կազմել են 355.296 դրամ, որից եկամտահարկի գծով՝ 216.065 դրամ, պարտադիր սոցիալական ապահովության վճարի գծով տույժ՝ 139.232 դրամ:

Եկամտահարկի գծով պարտավորության գումարն առաջացել է 2012 թ-ի տարեկան եկամուտների մասին պարզեցված հաշվարկով:

Պարտադիր սոցիալական ապահովության վճարի տույժի գումարն առաջացել է 2011 թ-ի պարտադիր սոցիալական վճարի տարեկան եկամուտների մասին հայտարարագրով

